Շարունակվող զրույց

Մեր երկիրը կանգնած է բարդ մարտահրավերների առջև՝ չունենալով էներգետիկ, հումքային, մարդկային լուրջ ռեսուրսներ, տնտեսական, ռազմատեխնիկական և այլ կարգի հզորություն: Այս պայմաններում մեր ունեցած ամենառեալ հարստությունը, ըստ էության, մարդն է, նրա որակական հատկությունները, մասնագիտական խորիմացությունը, ժամանակի խնդիրներին արագ և համարժեք արձագանքելու կարողությունը:

Այսօրվա մեր զրույցի թեման հանրակրթությունն է: Անվիճելի է, որ հենց դպրոցում է ձևավորվում ու կայանում մարդն ու քաղաքացին, հայրենասեր զինվորն ու զորավարը, շինարարն ու ճարտարապետը, գիտնականն ու արվեստագետը:

Այս հարցերի շուրջ զրուցելու ենք ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի նախագահ, երկար տարիներ Հայաստանի կրթական ու գիտական կառույցներում բարձր պաշտոններ վարած՝ մանկավարժական բուհի ռեկտոր, Հայ-ռուսական համալսարանի ռեկտորի գլխավոր խորհրդական, ուսումնական ու գիտական ոլորտում բազում հիմնարար աշխատությունների հեղինակ Էդուարդ Մուշեղի Ղազարյանի հետ:

ՀԱՐՑ. Հարգելի պրոֆեսոր, Դուք անցել եք կյանքի բազմափորձ ուղի, գիտակրթական գործի մեծագույն նվիրյալ եք ու գիտակ: Ընդհանուր գծերով ինչպե՞ս կբնութագրեիք հանրակրթության արդի վիճակը Հայաստանում:

Հայաստանը դարեր ի վեր հայտնի է իր մշակույթով ու գիտությամբ. 301թ. աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն ընդունած ժողովուրդը 5-րդ դարում ծնեց Մաշտոց ու Խորենացի, 7-րդ դարում՝ Շիրակացի, միջնադարում կառուցեց ճարտարապետական հրաշքներ՝ Զվարթնոց ու Աղթամարի Սուրբ Խաչ, Անիի Մայր տաճար ու բազում այլ կոթողներ: Եվ բնական էր, որ հայ ժողովրդի արգանդը հետագա դարերում պետք է ծներ Նարեկացի ու Շնորհալի, Սայաթ-Նովա ու Խաչատուր Աբովյան, Հովհաննես Թումանյան ու Ալեքսանդր Թամանյան, Եղիշե Չարենց ու Վիլյամ Սարոյան, Հովհաննես Այվազովսկի ու Շառլ Ազնավուր, Կոմիտաս ու Արամ Խաչատրյան, Վիկտոր Համբարձումյան ու Սերգեյ Մերգելյան:

Այս վիթխարի նվաճումներով մենք համընթաց էինք հին ու մեծ ազգերին ու ժողովուրդներին։ Եվ երբ այս բարձունքից ենք նայում ներկա իրողություններին՝ պատկերը աղոտանում է և ոգևորությունը նվազում։

Մենք այժմ շատ ու շատ բնագավառներում, դժբախտաբար նաև կրթության ոլորտում, զիջում ենք շատերին, նույնիսկ նրանց, որոնց նախկինում մեզ մրցակից չենք էլ համարել։ Պատճառները շատ են. մեր նորանկախ երկրի երեք տասնամյակներում այդպես էլ խորը ըմբռնում և համարժեք վերաբերմունք չձևավորվեց կրթության, դպրոցի և նրանցում աշխատողների բարձր առաքելության նկատմամբ։ Միայն այն փաստը, որ այդ տարիներին 11 կրթության նախարար է փոխվել, որոնցից 3-ը վերջին 5 տարում (սրանք արդեն սուպերնախարարության ղեկավարներ էին), շատ բան է ասում։ Իսկ այն, որ նրանց մի մասը եղել են մաքուր գիտնականներ և իրենց աշխատանքի ընթացքում երբեք չեն առնչվել դպրոցին, չգիտեն նրա խնդիրները, չունեն նույնիսկ գործին տեղյակ տեղակալներ կամ խորհրդականներ, բնական է, չեն կարողանա բազում խնդիրների լուծումներ գտնել։ Մանավանդ ժամանակ չեն ունեցել խորանալ աշխատանքի մեջ, մոտիկից ծանոթանալ այդ վիթխարի կառույցի ներքին կյանքին, հասկանալ իրենց առջև ծառացած անհետաձգելի գործերը։ Էլ չենք խոսում այն մասին, որ հաճախ այս կամ այն բարձր պաշտոնին նշանակելը պայմանավորված էր քաղաքական, կուսակցական շահերը սպասարկելով, ընտրական գործընթացներին նրանց անհարկի միջամտություններով։ Երկար տարիներ կրթական համակարգը ստիպողաբար ներքաշված էր այդ քաղաքական գործընթացներում, որն էլ խաթարում էր համակարգի հեղինակությունն ու կոչումը։

Եվ ստացվում էր, որ հանրակրթության ճակատագիր որոշողները երբեմն անտեղի որոնումների մեջ էին ընկնում այն դեպքում, երբ խորհրդային դպրոցն արդեն մեծ հաջողությամբ վաղո՛ւց հաղթահարել էր որոնումների փուլը և իր տեսակի մեջ առաջնային էր աշխարհում. մատաղ սերնդին լրջագույն գիտելիքներ հաղորդելու համար խորհրդային հանրակրթական ողջ համակարգը կառուցվում էր երկու հիմնասյուների վրա, որոնք էին՝ ա/ **հանրագիտայնություն** և բ/ **հիմնարարություն**, որոնց վրա վստահորեն վեր էին խոյանում աշխարհում առաջինը տիեզերք նվաճած երկրի գիտական հաջողությունները։ Մնում էր միայն եղածը լավ ընկալել և ամրապնդել՝ ավելացնելով ազգային առանձնահատկություններից բխող շտկումները։ Մինչդեռ արվեց ուղիղ հակառակը. անթույլատրելիորեն պարզեցվեցին կրթական ծրագրերը՝ իբրև թե սովորողներին չծանրաբեռնելու պատրվակով, դուրս մղվեցին վերոհիշյալ երկու

կարևորագույն սկզբունքները և մի շարք կարևոր առարկաների դասաժամեր կրճատվեցին։

Խորհրդային շրջանի բազմաթիվ նվաճումների հախուռն մերժումը իրեն չարդարացրեց։ Անկեղծ ասած՝ մենք դեռ շատ ճանապարհ պետք է անցնենք, որ մեր անկախ հանրապետությունը սոցիալական խնդիրներում, ինչպիսիք են անվճար կրթությունը, առողջապահությունը, ծերերի ու մանուկների նկատմամբ ուշադրությունը, ապահով վաղվա զգացումը հասցնենք այն մակարդակին, որը ստեղծել էր խորհրդային երկիրը։

Ես ժամանակին զգուշացնում էի, որ 12-ամյա կրթությունը անիմաստ ճոխություն է և ծախս. 11-ամյան միանգամայն նորմալ է հանրակրթության ծրագրերը ամբողջությամբ լուծելու համար, բայց չլսեցին և հիմա ավագ դպրոցում դասավանդվող շատ թեմաներ պարզապես անհարկի կրկնություններ են։ Ցավալիորեն պետք է ընդունել, որ զգալիորեն նվազել է կրթության որակը. դպրոցների շատ շրջանավարտներ չափազանց ցածր գիտելիքներ ունեն գրեթե բոլոր առարկաներից։ Հայտնի պատճառներով առաջացել են այլ խնդիրներ ևս. սահմանամերձ գյուղերի շատ դպրոցներում աշակերտների ընդհանուր թիվը չի գերազանցում 100-ը և որոշ դասարաններ միացյալ են դասեր անում։ Բնականաբար այդ տեղերում չկան բավարար դասաժամեր և չի լրացվում ուսուցիչների դրույքային ծանրաբեռնվածությունը և դա իր հերթին հարված է նրանց առանց այն էլ ցածր աշխատավարձին։ Իսկ քաղաքներում, մասնավորաբար մայրաքաղաքում, ընդհակառակը, դասարանների ծանրաբեռնվածությունը շատ մեծ է՝ 35-40 աշակերտ, այդ քանակի հետ դժվար է բարձր որակ ապահովել։ Այդ պատճառով ժամանակին ես առաջարկել եմ նախևառաջ բարձրացնել ուսուցչի **բազային աշխատավարձը**, նոր միայն կիրառել հավելավճարները։ Կարևորում եմ, որ հիմա այդքան շատ գովազդվող ատեստացիայի հարցն էլ պետք է ներդրվի այդ քայլից հետո, այլապես ուսուցիչների մեծագույն մասը շատ ցածր է վճարվում, որը նվազեցնում է նրանց ոգևորությունն ու նվիրումը իրենց գործին, իսկ առանց նվիրումի դժվար է ցանկալի արդյունավետություն և արդյունք ապահովել։

ՀԱՐՑ. Այնուամենայնիվ այդ երեք տասնամյակներում հանրակրթության համակարգում կատարվել են բազմաթիվ վերափոխումներ, դրանք ի՞նչ դրական արդյունքներ են տվել։

Ես արդեն մասամբ այդ հարցին անդրադարձա։ Ավելին ասեմ. նախկինում հանրապետության հեռավոր շրջաններում կադրային սովը լուծելու նպատակով կառուցվում էին ուսուցչի բարեկարգ տներ, ուր անվճար ու անժամկետ կարող էին

ապրել գործուղված կադրերը։ Նրանց բոլորին տրվում էր ճանապարհածախս և լրացուցիչ հավելավճար, պետությունը հատուցում էր բարձր լեռնային գոտիներում գտնվող դպրոցներում աշխատելու դեպքում՝ նաև կոմունալ ու էլեկտրաէներգիայի ծախսերը, գործուղված ուսուցչին հատկացված էր տնամերձ հողամաս, գյուղական վայրում աշխատող տղամարդ ուսուցչին տրվում էր բանակից տարկետման իրավունք և այլ կարգի արտոնություններ։ Բարձր էր ուսուցչի և դպրոցի նկատմամբ պետության և հասարակության հարգանքն ու ուշադրությունը։ Բոլոր մակարդակներում սովորողների կողմից գրեթե հավասարապես խորագույն հարգանք ու խոնարհում կար ծնողի, ուսուցչի և գիտնականի նկատմամբ, որոնք միմյանց լրացնելով, օժանդակելով, օգնելով հաղթահարում էին այդ ծանր ու ապագայակերտ գործը։ Մինչդեռ անկախության առաջին իսկ տարիներին արագորեն վաճառվեցին կամ այլ նպատակի հանձնվեցին ուսուցչի տների մի մասը, բազմաթիվ մանկապարտեզներ վաճառվեցին, վերացվեցին ուսուցիչներին տրվող շատ արտոնություններ և կամաց-կամաց պակասեցին մարզեր և հեռավոր գյուղեր մեկնող ուսուցիչները։ Իսկ օրավուր թափ հավաքող գնաճը, որը չէր ուղեկցվում աշխատավարձի բարձրացմամբ, հանգեցրեց նրան, որ դպրոցների մեծ մասում սկսեցին պակասել տղամարդ ուսուցիչներն ու տնօրենները՝ դրանից բխող այլևայլ ոչ ցանկալի դրսևորումներով։ Իհարկե, որոշ դրական փոփոխություններ ևս եղել են. մասնավորապես վերջին տարիներին կառուցվել ու կառուցվում են դպրոցական շենքեր, մարզադպրոցներ, արվեստի դպրոցներ, պետականացվել և հետ են բերվել ապօրինի սեփականաշնորհված մանկապարտեզների շենքեր, որոնք վերանորոգվել և տրամադրվել են մեր փոքրերին։ Որոշ չափով՝ 20%, բարձրացվել են ուսուցիչների աշխատավարձերը, հնարավորություն է տրվել նրանց՝ ատեստացիայի միջոցով առավել կտրուկ բարձրացնել աշխատավարձերը։ Այստեղ էլ դրսևորվում է մի այլ ստվերոտ փաստ. մանկավարժների մի ստվար մաս վախենում է մասնակցել ատեստացիայի՝ կասկածելով իր գիտելիքներին, մի այլ հատված մասնակցում է և ձախողվում։ Սա շատ ցավալի իրողություն է և տխուր մտորումների հարց։ Լավ է, որ գոնե նրանց մի մասը, այնուամենայնիվ, հաղթահարում է սահմանված շեմը և էականորեն բարելավում աշխատավարձի հարցը։ Բայց մի՞թե կարելի է այդքանով պետության կողմից ուսուցչի վեհ կոչման համար պարտքը կատարած համարել։ Ճապոնիայում, որ աշխարհի ամենազարգացած երկրներից մեկն է, ուսուցչի նկատմամբ և՛ հարգանքը, և՛ ֆինանսական ապահովվածությունը հավասար է երկրի կայսրի նկատմամբ

ցուցաբերվող վերաբերմունքին: Ընդհանրապես քաղաքակիրթ երկրներում ուսուցիչը, բժիշկն ու զինվորականը ամենահարգված և ապահովված խավն են: Հին աշխարհի իմաստուններից մեկը՝ Սոկրատեսը, ասում էր. «Բոլոր մասնագիտությունները մարդկանցից են և միայն երեքն են Աստծուց՝ ուսուցիչը, դատավորը և բժիշկը»: Գործին գիտակ մարդիկ հաճախ են բարձրաձայնում այս մասին, բայց, ինչպես ասում են՝ ձայն բարբառո անապատի: Այնպես որ, իշխանությունները պարտավոր են արագ և հետևողականորեն լուծել այս հարցերը: Ցավալի է, որ մեր երկրում որոշ ոլորտների աշխատակիցների ամսական կենսաթոշակն ավելի բարձր է, քան ուսուցչի մի քանի ամսվա աշխատավարձը:

ՀԱՐՑ. Հարգելի Էդուարդ Մուշեղի, կրթության ոլորտում աշխարհով մեկ գնալով ավելի է բարձրանում բնագիտական առարկաների դերը: Դուք, տասնամյակներով լինելով հանրապետությունում այդ բնագավառի կարկառուն և առաջատար դեմք և՛ գիտական, և՛ կազմակերպական առումով, ինչպե՞ս եք գնահատում այդ գործի դրվածքը մեր երկրում և այն բարելավելուն միտված ի՞նչ քայլեր եք առաջարկում:

Այդ հարցը ինձ, իրոք, շատ է հուզում և ոչ միայն իմ մասնագիտական և կրթության կազմակերպման ոլորտում երկարամյա աշխատանքի բերումով: Բանն այն է, որ գիտության այդ բնագավառը ուղղակիորեն կապվում է ցանկացած երկրի տեխնոլոգիական, ռազմական, տնտեսական հզորության, անվտանգության հետ, մի բան, որ մեզ՝ հայերիս, այն էլ հիմա, շատ է պետք: Եթե կուզեք իմանալ՝ դա մեր աքիլեսյան գարշապարն է, մեր ամենախոցելի տեղը:

Վերջին տասնամյակներում այդ կոպիտ սխալը առավել ցցուն, ցավով ու ողբերգությամբ դրսևորվեց մեր երկրի ճակատագրում: Մանրամասների մեջ չմտնելու համար, որը մեզ կշեղի բուն թեմայից, ես կխոսեմ հանրակրթության գործում առկա մի քանի էական բացթողումներից:

Ցանկացած երկիր, ժողովուրդ, ընտանիք, անհատ մարդ նախևառաջ ցանկանում է երկու բան՝ ապահովություն և բարեկեցություն, որին, գոնե մեր ժամանակներում, կարելի է հասնել գերազանցապես որակյալ հանրագիտական կրթության և բարձր տեխնոլոգիաներին տիրապետելու միջոցով: Այդ ճանապարհով կարելի է շրջանցել և առաջ անցնել նույնիսկ հզոր բնական ու մարդկային ռեսուրսներով հարուստ երկրներից: Օրինակները շատ են՝ Ճապոնիա, Հարավային Կորեա, Իսրայել, Սինգապուր և այլն: Իսկ բարձր տեխնոլոգիա ունենալու համար անհրաժեշտ է լավագույնս տիրապետել ճշգրիտ և

բնագիտական առարկաներին՝ ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն։ Սա էլ իր հերթին պարտադրում է ունենալ բարձրորակ դպրոցական և բուհական համակարգ։ Բայց մեզանում, դժբախտաբար, ո՛չ դպրոցներն են այդպիսին, ո՛չ բուհերը։ Պարզաբանեմ.

Կրթության գործիքակազմը ունի 4 բաղադրիչ, որոնցից յուրաքանչյուրը մի լուրջ համակարգ է և ունի բացառիկ դեր.

ա/ շենքային պայմաններ (մարզադահլիճ, չափորոշիչներին համապատասխանող դասասենյակներ, ջեռուցում և այլն),

բ/ ուսումնական անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության ուսումնական լաբորատորիաներ, աշխարհագրության կաբինետ, համակարգչային տեխնիկա, ժամանակակից էլեկտրոնային գրատախտակներ, հրաձգարան, զենքի պահոց և այլն,

գ/ ուսումնական ծրագրեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսումնա-մեթոդական գրականություն,

դ/ որակյալ ուսուցչական կազմ, ընդ որում՝ ուսուցիչը կրթական ծրագրերն իրականացնող գլխավոր դերակատարն է, որից պահանջվում է՝

1. կատարյալ տիրապետել իր մասնագիտությանը դպրոցական ծրագրերի շրջանակներում,
2. ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ներդրում ուսումնական պրոցեսում,
3. անկախ իր դասավանդած առարկայից՝ կատարյալ տիրապետել գրական հայերենին,
4. գիտակցորեն կարևորելով սեփական առաքելությունը՝ գործին ձեռնամուխ լինել մեծ նվիրումով։

Եթե այս չորս բաժիններից նույնիսկ մեկը կաղում է, ուրեմն համարեք, որ կաղում է այդ ողջ համակարգը։ Իսկ մեզանում, դժբախտաբար, կաղում են բոլորն էլ։ Լավն այն է, սակայն, որ պետության կողմից դրանց «բուժումն» սկսված է, մնաց, որ այն հետևողական լինի և հաղթական ավարտ ունենա։

ա/ Բարեբախտաբար պետական ծրագրով պլանավորված և սկսված է բազմաթիվ դպրոցական շենքերի կառուցում և վերակառուցում երկրով մեկ։ Այս փաստն արդեն իսկ վկայում է, որ եղածը խիստ անբավարար է։ Հանրահայտ պետական ու

քաղաքական գործիչ Օտտո ֆոն Բիսմարկն հավատացնում էր՝ «Նա, ով տնտեսում է դպրոցի վրա, ստիպված է լինելու բանտեր կառուցել»։

բ/ Այս բաժնի գծով՝ ուսումնական սարքավորումներ և լաբորատորիաներ. մենք դեռ չենք հասել նույնիսկ խորհրդային շրջանի վիճակին. իսկ ինչ վերաբերում է համակարգչային տեխնիկային և ժամանակակից գրատախտակներին, ապա կարծում եմ դեռ ամենացածր շեմի վրա ենք։

գ/ Այս բաժնի հետ կապված մի քանի փաստ բերեմ և ամեն ինչ պարզ կլինի. ԿԳՍՄ նախարարության և հատկապես Գիտկոմի որոշմամբ ավելի քան 4 տարի է կասեցվել է ճշգրիտ և բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար նախատեսված «Բնագետ» ամսագրի հրատարակումը և գրեթե նույնքան ժամանակ է, ինչ դադարեցվեց «Դպրոցականի գրադարան» գիտահանրամատչելի մատենաշարի ֆինանսավորումը։ Այս բաժնում բացթողումներն ու սխալները շատ ավելին են։ Կուզեի ընդգծել նաև հետևյալ իրողությունը՝ 2018թ. ՀՊՄՀ-ում ստեղծվեց և գործում էր «Բնագիտական կրթության գիտամեթոդական լաբորատորիան», որը արդյունավետ աշխատանք ծավալեց հենց առաջին տարում։ Այնտեղ ընդգրկված են հանրապետության լավագույն գիտնականներ և իրականացնում են շատ անհրաժեշտ և հավակնոտ ծրագրեր։ Սակայն անհիմն պատճառներով վերջին տարիներին դադարեցվել է պետական ֆինանսավորումը, թեև աշխատանքները նույն թափով շարունակվում են։ Հուսանք, որ ԿԳՍՄ-ում անհրաժեշտ հետևություններ կանեն և կուղղեն իրենց սխալը։

դ/ Ուսուցչի նկատմամբ վերաբերմունքի մասին արդեն վերևում խոսեցինք։ Եթե խորհրդային շրջանում նրանց մասին շատ հաճախ ոգևորիչ հաղորդումներ էին լինում, պետական պարգևների էին արժանացնում, նկարահանվում էին ֆիլմեր, տարբեր ուղեգրերով գործուղումներ էին լինում հանգստյան տներ ու արտերկիր, ունեին բարձր աշխատավարձ ու համընդհանուր հարգանքով էին շրջապատված, ապա հիմա այդ պատվաբեր աշխատանքը դարձել է ոչ գրավիչ, ոգևորիչ գրեթե ոչինչ չկա։ Աստվածաշնչից Մաշտոցի հայերեն թարգմանած առաջին նախադասությունը՝ «Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարների խոսքերը», ոչ միայն Աստծո խոսքն էր, այլև Մաշտոցի պատգամը իր ժողովրդին։ Այն պետք է սերնդեսերունդ անընդմեջ մատուցվի մեր ժառանգներին։ Իսկ այդ մատուցողները, չմոռանանք, ուսուցիչներն են։ Ուստի չափազանց կարևոր ու զգայուն այդ ոլորտը ամենաբարձր ուշադրության ու ներդրումների, գնահատման և օգնության կարիք ունի։

Սակայն հանուն արդարության պետք է ասել, որ վերջերս սառույցը շարժվել է: Բնագիտական առարկաների դասավանդման, բուհերում դիմորդների, ուսանողների խրախուսման համար Նախարարությունը որոշ քայլեր սկսել է.

ա/ դպրոցներում բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար սահմանված է 20% աշխատավարձի բարձրացում,

բ/ մանկավարժական բուհերի բնագիտական ֆակուլտետներում սովորողների համար սահմանված է բարձր կրթաթոշակ՝ ամսական 70,0 դրամ:

Որ այս քայլերը խրախուսելի են, ճիշտ է, բայց որ դրանք շատ ուշացած են՝ փաստ է: Այսօր Հայաստանի մանկավարժական բուհերում բնագիտական առարկաների գծով դիմորդներ կամ չկան, կամ շատ քիչ են:

Հանրապետության շատ դպրոցներում այդ առարկաների գծով ուսուցիչների մի զգալի մասը տարեց է, միջին տարիքը 60-ից բարձր է: Բերենք անհանգստություն պատճառող մի քանի օրինակներ.

- մինչև 45 տարեկան ուսուցիչներ՝
  Շիրակի մարզ – Ֆիզիկա – 157-ից 41-ը
  Քիմիա – 110-ից 33-ը
  Սպիտակում – Ֆիզիկա – 96-ից 18-ը
  Քիմիա – 66-ից 27-ը

Ուսուցիչների տարիքը 60-ից բարձր է՝

Շիրակի մարզում՝ Ֆիզիկա – 157-ից 55-ը

Քիմիա – 110-ից 30-ը

Լոռու մարզում՝ Ֆիզիկա – 136-ից 45-ը

Սյունիքի մարզում՝ Ֆիզիկա – 96-ից 54-ը

Եթե սրան հավելենք, որ հեռավոր որոշ գյուղերում ընդհանրապես մասնագետներ չկան, պատկերը կամբողջանա:

ՀԱՐՑ. Մեծարգո պրոֆեսոր, կուզեի Ձեզ տալ այսօրվա երևի թե իմ վերջին հարցը:

Շուրջ երկու տասնամյակ է, ինչ Դուք աշխատում եք Հայ-ռուսական համալսարանում՝ կազմակերպելով ու ղեկավարելով նրա խոշոր ենթակառուցվածքներից մեկը՝ Ինժեներաֆիզիկական ինստիտուտը, լինելով նաև Համալսարանի ռեկտորի գլխավոր խորհրդատուն: Շուրջ 15 տարի է, ինչ ՀՌՀ-ին կից գործում է «Ուսմունք» դպրոցը, որի ավագ խմբի հոսքերից մեկը Ձեր նախաձեռնությամբ արդեն 4 տարի է ունի բնագիտական թեքում: Նրանց համար ապահովված է անվճար կրթություն և դասավանդում են բարձրորակ գիտնականներ ու մանկավարժներ: Նրանք օգտվում են Համալսարանի հարուստ լաբորատորիաներից, գրադարանից, սպորտային կառույցներից և այլն:

Խնդրում եմ խոսեք այս հոսքի այսօրվա հաջողությունների մասին և Ձեր հույսերը՝ կապված նրանց ապագայի հետ:

Այսօրվա մեր զրույցից կրկին հաստատվեց իմ սևեռուն հետաքրքրությունը բնագիտական ոլորտի կրթության կարևորության նկատմամբ: Տասնամյակներ առաջ էր, երբ ես նոր-նոր դասավանդում էի ԵՊՀ-ում, մեր մեծ մաթեմատիկներից մեկի՝ Ա.Շահինյանի նախաձեռնությամբ ԵՊՀ-ին կից ստեղծվեց ֆիզմաթ դպրոցը, որը հիմա հայտնի է գրեթե ողջ աշխարհում իր բարի համբավի, փայլուն շրջանավարտների շնորհիվ: Ես նույնպես աշխատել եմ այդ դպրոցում՝ տալով լավագույն շրջանավարտներ, որոնք հետագայում դարձան լուրջ ու ճանաչված գիտնականներ: (Ես հիմա ուրախանում եմ նաև մեր երկրում գործող «Թումո» կենտրոնով, ուր նույնպես աճում են մեծ ապագա խոստացող պատանիներ):

Ես դեռ էն գլխից երազել եմ ստեղծել ևս մեկ այդպիսի դպրոց, որն իր գործունեությամբ պատիվ բերի մեր երկրին ու ծառայի նրա հզորացմանը: Ինչպես տեսնում եք այդ դպրոցը արդեն կա և դուք նույնպես դասավանդել եք այնտեղ՝ սաներին սովորեցնելով մեր «հազարագանձ» լեզուն ու գրականությունը:

Դպրոցն արդեն տվել է շրջանավարտներ, որոնք ընդունվել ու սովորում են Համալսարանում և լուրջ հույսեր են ներշնչում, իսկ Համալսարանում նրանց համար ստեղծվել են բոլոր հնարավորությունները բարձրակարգ գիտելիքներ ձեռք բերելու համար: Բարեբախտաբար Համալսարանի ղեկավարությունը, անձամբ ռեկտոր պարոն Էդվարդ Սանդոյանը, դպրոցը շրջապատել են ամենօրյա գործնական հոգատարությամբ: Վերջերս Համալսարանի Գիտխորհրդի որոշմամբ ընդունվեց «Ուսմունք» դպրոցի՝ մինչև 2030թ. զարգացման ծրագիրը, որը ներառում է բազմաթիվ կարևոր հարցերի հրատապ լուծում: Ընդ որում բնագիտական հոսքի

համար որոշվեց նաև հատկացնել ֆինանսական լրացուցիչ միջոցներ՝ դպրոցի ընդհանուր դրամական եկամուտներից՝ ուսումնական լաբորատորիաների կահավորումը ամբողջացնելու նպատակով։

Նոր ուսումնական տարում ավելի է բարելավվելու ուսուցչական կազմը։ Ես նույնպես դասավանդում եմ այդ դպրոցում և լիահույս եմ, որ մեր ակնկալիքները կարդարացվեն։

Բարի ճանապարհ մաղթենք նրանց։

ՀԱՐՑ. Ի՞նչ կուզեիք ավելացնել, հարգելի պրոֆեսոր։

Իբրև մեր զրույցի վերջաբան պետք է ընդգծեմ շատ կարևոր խնդիր, թեև այն բավական արծարծվեց։

Այսօր հանրապետությունում ոչ միայն ԿԳՍՄ նախարարության, այլև հենց Կառավարության ամենօրյա հոգսն ու ծրագիրը պետք է լինի լիարժեք ոտքի կանգնեցնել երկու բուհ՝ Երևանի պետական մանկավարժական համալսարանը և Պոլիտեխնիկ ինստիտուտը։ Մենք մի կողմից հավակնոտ ծրագրերից ենք խոսում, բայց երբեմն մոռանում, որ կարևորը, դժվարը ծրագիրն իրագործելն է։ Տեսանք, թե ինչ ծանր վիճակ է դպրոցներում էլ, բուհերում էլ բնագիտական (և ոչ միայն) առարկաների, դրա հետ կապված տարբեր հարցադրումների առումով։

Այո՛, մեզ առաջնահերթ պետք են պահանջվող որակավորում ունեցող մանկավարժներ, որոնք հանրապետության բոլոր դպրոցներում կապահովեն բնագիտական առարկաների դասավանդման բարձր մակարդակ։ Հիմա աշխարհի առաջատար երկրներն իրենց առջև խնդիր են դրել գիտատար արտադրություն և տնտեսություն ստեղծել։ Չպետք է հետ մնալ։

Այո՛, մեզ պետք են ինժեներական հզոր ուժեր։ Մեր երկիրն ունեցել է այդ բոլորը, գործել են գիտաարտադրական խոշոր կենտրոններ, որոնց արտադրանքը պահանջված է եղել նաև արտերկրում, հարկավոր է միավորել բոլոր ուժերը՝ երկրի կորսված նվաճումները հետ բերելու, մեր հայրենիքը արդյունաբերական հզոր երկիր դարձնելու համար։ Ընդ որում ինժեներական կադրերը, իմ ընկալմամբ, պետք է լինեն երկու կարգի՝

ա/ **կատարող** բարձրորակ ինժեներներ և

բ/ **արարող**, այսպես կոչված «**մտածող**» ինժեներներ, որոնք ունակ են եղածի վրա նո՛ր առաջարկելու, նո՛ր ստեղծելու։

Իսկ այդ նպատակով անհրաժեշտ են համապատասխան փոփոխություններ ֆիզիկայի և մաթեմատիկայի բուհական ծրագրերում՝ մասնավորաբար նկատի առնելով քվանտային ֆիզիկայի դերը, որը վերածվել է ինժեներական գիտության՝ ի դեմս նանոգիտության և նանոտեխնոլոգիաների։

21-րդ դարում ամենուրեք, նաև գիտության մեջ, արտադրությունում մրցակցությունն այնքան է սրվել և ուժեղացել, որ եթե մի պահ կանգնեցիր, դադար առար, նշանակում է՝ հետ ընկար։ Իսկ մենք հետ ընկնելու, երերալու իրավունք չունենք։ Ուստի իմ կողմից մատնանշված երկու «թիրախները»՝ ԵՊՄՀ-ը և ԵրՊԻ-ն իրենց բոլոր խնդիրներով հանդերձ պետք է լինեն հանրապետության ղեկավարների ամենօրյա հոգսն ու խնդիրը, խնդիր, որն անհապաղ լուծման կարիք ունի։

Շնորհակալություն այս շատ կարևոր խորհուրդներ պարունակող հարցազրույցի համար, հարգելի Էդուարդ Մուշեղի։ Հավատանք, որ հանրապետության համար այս կարևորագույն հարցերն ու Ձեր խորիմաց ու սրտացավ դիտարկումները կարժանանան երկրի ղեկավարների, համապատասխան գերատեսչությունների սևեռուն ուշադրությանը և կարվեն գործնական քայլեր՝ Ձեր կողմից բարձրացված հրատապ հարցադրումները օր առաջ կյանքի կոչելու համար, հարցեր, որոնք շոշափում են բոլորիս միակ հայրենիքի՝ Հայաստանի և նրա ժողովրդի անվտանգությունն ու բարեկեցությունը։

Հարցազրույցը վարեց
Բանասիրական գիտությունների թեկնածու,
Հայ-ռուսական համալսարանի դոցենտ
Ռոլանդ Ավետիսյանը

03 հունիսի 2024թ.